https://doi.org/10.46991/hc.2025.22.1.315

The Path of a Distinguished Historian and Renowned Researcher of the Great Patriotic War: On the Occasion of the 85th Anniversary of the Birth of Kliment Harutyunyan.

Edik Minasyan
https://orcid.org/0000-0003-3206-6103
YSU Head of the Chair of History of Armenia, Professor, Doctor of History
eminasyan@ysu.am

Վաստակաշատ պատմաբան, Հայրենական Մեծ պատերազմի անվանի հետազոտողի անցած ուղին. Կլիմենտ Հարությունյանի ծննդյան 85-ամյակի առթիվ:

Էդիկ Մինասյան
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, պ.գ.դ

Путь заслуженного историка, видного исследователя Великой Отечественной войны: к 85-летию со дня рождения Климента Арутюняна.

Эдик Минасян
ЕГУзаведующий кафедрой истории Армении,профессор, д.и.н.

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության պատմության հիմնահարցի տարեգիր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը բոլորեց իր ծննդյան 85-ամյակը:

Կ. Ա. Հարությունյանը ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում՝ շիկահողցի ծնողների ընտանիքում: 1947-1957 թթ. նա սովորել և ավարտել է թիվ երկոր միջնակարգ դպրոցը: 1961-1966 թթ. բարձր առաջադիմությամբ ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ցերեկային բաժինը:

1966– 1968 թթ. Կլիմենտ Հարությունյանն աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող, ձեռք բերել արխիվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ: 1968 թ. ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան (արտադրությունից կտրված) և 1971 թ. ավարտել այն: Ավարտելուց հետո մինչև այսօր Կ. Ա. Հարությունյանն

աշխատում է նույն ինստիտուտի նորագույն պատմության բաժնում՝ որպես առաջատար գիտաշխատող, իսկ 1994 թ. հունիսից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» բաժնի վարիչ, այնուհետև՝ «Հայ զինվորականության պատմությունը» թեմատիկ խմբի ղեկավար, 2015 թ.՝ գլխավոր գիտական աշխատող: 1979 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի, իսկ 1994-ին՝ դոկտորի գիտական աստիճան: Նա մասնագիտացել է Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության, հայկական ազգային զորամիավորումների և զինվորական մամուլի պատմության, հայ մարշալների, ծովակալների և Հայկական բանակի գեներալների կենսագրությունների անհայտ էջերի լուսաբանման հիմնահարցերում: Զարմացնում է Կ. Հարությունյանի բեղմնավոր գրիչը, որի հիմքում ընկած է նրա անսահման աշխատասիրությունն ու նվիրվածությունը գիտական աշխատանքին: Առ այսօր հրատարակել է 44 մենագրություն, համահեղինակ է 14 այլ գրքերի, մասնակցել է արխիվային փաստաթղթերի ու նյութերի 4 ժողովածուի և «Հուշամատյան» հիմնակազմ քառհատորյակի կազմման և խմբագրման աշխատանքներին, տպագրել ավելի քան 200 գիտական, 110 թերթային հոդվածներ, միջազգային, հանրապետական և ակադեմիական գիտաժողովներում հանդես եկել 60-ից ավելի զեկուցումներով, հայերեն և ռուսերեն կազմել է քարտեզներ նվիրված Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը, որոնք տեղ են գտել «Հայաստանի ազգային ատլաս» (հ. Բ, Ե., 2008) և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս» (Ե. 2009) հիմնակազմ ատլասներում: Կ. Ա. Հարությունյանը խմբագրել է 32 և գրախոսել 15 գիրք: Նրա ղեկավարությամբ պատրաստվել է 4 թեկնածուական ընդդիմախոսությամբ, պաշտպանվել 5 ատենախոսություն:

Կ. Հարությունյանի հիմնարար աշխատություններից է 2002 թ. լույս տեսած «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.» գիրքը, որտեղ առաջին անգամ հայ պատմագրության մեջ լուսաբանվել է հայկական զինուժի պատմությունը վերոհիշյալ ժամանակաշրջանում: Վաստակաշատ պատմաբանի հույժ տպավորիչ գործերից է նաև 2004 թ. ռուսերեն լեզվով լույս տեսած «Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.)» մենագրությունը, որտեղ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվից (Մոսկվայի մարզ, ք. Պոդոլսկ), ՌԴ ՊՆ ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվից (Լենինգրադի մարզ, ք. Գատչինա), ՌԴ ռազմապատմական պետական կենտրոնի արխիվից (ք. Մոսկվա) և այլ արխիվներից հայտնաբերած նորահայտ վավերագրերի, համապատասխան մասնագիտական գրականության ու մամուլի տվյալների հիման վրա Կ. Հարությունյանը հանգամանորեն ու նորովի բացահայտել է հայ ռազմիկների կատարած դերը պատերազմի գլխավոր ճակատամարտերում տարած հաղթանակում, ցույց է տրվել թիկունքի աշխատողների հերոսական աշխատանքը, հայ պարտիզանների ու սփյուռքահայերի ներդրումը ֆաշիզմի ջախջախման գործում:

Կ. Հարությունյանի գրչին են պատկանում նաև մարշալներ Ի.Ք. Բաղրամյանի, Հ.Խ. Բաբաջանյանի, Ս.Ա. Խուդյակովի (Ա.Ա. Խանփերյանց), Ա.Ք. Ազանովի, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Ի.Ս. Իսակովի մասին ռուսերեն մենագրությունները, որոնք շարադրված են

արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա և զգալի ներդրում են անվանի զորավարների կենսագրությունները լուսաբանելու գործում: Կ. Հարությունյանի ուսումնասիրության ոլորտում հատուկ տեղ են գրավում՝ Ստալինգրադի, Լենինգրադի, Կուրսկի, Մոսկվայի, Ղրիմի Բելոռուսիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի և Ավստրիայի համար մղված մարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցերը:

Կ. Հարությունյանը պ.գ.դ. Մարատ Սահակյանի հետ 1988 թ. հրատարակել է «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի» գիրքը, որտեղ առաջին անգամ լուսաբանվել են ՀԽՍՀ ԳԱ համակարգում աշխատող Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների ռազմաճակատային սխրանքներն ու աշխատանքային գործունեությունը: Այս գիրքը (որոշ լրացումներով) ռուսերեն լեզվով հրատարակվել է 2001-ին՝ «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945)» վերնագրով:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Կ. Ա. Հարությունյանը սերտորեն համագործակցում է նաև Բելառուսի և Ռուսաստանի իր գործընկերների հետ: Արդյունքում 2010 թ. Մինսկում լույս է տեսել «Խորհրդային Միության հայ հերոսները Բելառուսի համար մղված մարտերում (1941–1944»)՝ աշխատությունը՝ Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի ռազմական պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մ. Լիտվինի համահեղինակությամբ: 2019 թ. Մինսկում հրատարակվեց «Հայ ռազմիկները Բելառուսի համար մղված մարտերում (1941–1944 թթ.) ստվարածավալ աշխատությունը, որի համահեղինակներն են՝ Կ.Ա. Հարությունյանը, Ա.Մ. Լիտվինը, Ա.Վ. Խեչոյանը, Ռ.Վ. Աթոյանը, Ե.Գ. Վոլսկայան և Ե.Ա. Գուրինովը): 2010 թ. Երևանում ռուսերեն լեզվով հրատարկված «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941–1945)» աշխատությունը (Կ.Ա. Հարությունյան, Հ.Ռ. Պողոսյան) գրքի առաջաբանը գրել է ՌԴ ԳԱ պատմության ինստիտուտի ռազմական կենտրոնի վարիչ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Գ.Ա. Կումանյովը: Մինչ այդ՝ 2009 թ. Սանկտ-Պետերբուրգում ռուսերեն լեզվով լույս է տեսել Կ.Ա. Հարությունյանի «Հայերը Լենինգրադի համար մղված մարտերում» գրքույկը: Կ.Ա. Հարությունյանի վերոհիշյալ բոլոր աշխատությունները գրված են հարուստ արխիվային նյութերի հիման վրա, որոնք ունեն աղբյուրագիտական կարևոր արժեք:

Նա հայ այն եզակի պատմաբաններից է, որ սկսած 1970 թ. մինչև 2015 թ. անընդմեջ աշխատել է Ռուսաստանի ռազմական և ծովային, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Վոլգոգրադի, Կուրսկի, Բրյանսկի, Մինսկի, Բրեստի, Թբիլիսիի, Երևանի պետական կենտրոնական արխիվներում ու ռազմապատմական թանգարաններում, մասնակցել է ՌԴ նախագահի կողմից 2012 թ. կազմակերպված «Մենք հաղթեցինք միասին» միջազգային ամենամյա համաժողովի աշխատաքներին, որոնք ամեն տարի պարբերաբար տեղի են ունենում ԱՊՀ տարբեր քաղաքներում:

2025 թ. լույս տեսավ Կ. Հարությունյանի «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Մանջուրիայի ազատագրմանը (9 օգոստոսի-2 սեպտեմբերի 1945 թ.)» մենագրությունը, որտեղ նորահայտ արխիվային փաստաթղթերի հիման վրա նա առաջին անգամ ցույց էր տվել հայ ժողովրդի մասնակցությունը «Մանջուրիայի» օպերացիային և նրա ազատագրմանը ճապոնացի նվաճողներից:

The Path of a Distinguished Historian and Renowned Researcher of the Great Patriotic War: On the Occasion of the 85th Anniversary of the Birth of Kliment Harutyunyan

Վաստակաշատ պատմաբան, Հայրենական Մեծ պատերազմի անվանի հետազոտողի անցած ուղին. Կլիմենտ Հարությունյանի ծննդյան 85-ամյակի առթիվ

Վաստակաշատ պատմաբանի գիտահետազոտական 55 տարիների կատարած աշխատանքը ամփոփված է 2020 թ. մարտի վերջերին հրատարակված «Կենսամատենագիտության» մեջ, որտեղ բացի կենսագրական տվյալներից, տրված են նաև նրա մենագրությունների և գիտահրապարակախոսական աշխատանքների ցուցակները, հարազատների, աշխատանքային ընկերների և ստացած պարգևների լուսանկարները։ Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ գիտական բեղմնավոր և հայրենանվեր աշխատանքի համար Կ. Ա. Հարությունյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Մարշալ Բաղրամյան», «Գարեգին Նժդեհ», «Վազգեն Սարգսյան» 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած Հաղթանակի 65, 70 և 75-ամյակի, «Մ. Ա. Շոլոխովի 100-ամյակի», «Հունան Ավետիսյան» և այլ մեդալներով, ՀՀ ԳԱԱ «Գովեստագրով» և «Վաստակագրով», ՌԴ ԳԱ «Պատվավոր դիպլոմով», ԱՊՀ Վետերանների միջազգային միության «Պատվո նշան» կրծքանշանով», ՀՀ Պաշտպանության նախարարի «Պատվոգրով, իսկ 2025 թ. ծննդյան 85-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Մովսես Խորենացի» հուշամեդալով։

Սրտանց շնորհավորելով ավագ գործընկերոջս նրա ծննդյան 85-ամյակի և կես դարից ավելի գիտահետազոտական աշխատանքի հոբելյանի առթիվ, ցանկանում եմ առողջություն և գիտական գործունեություն։

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ